ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
«ԱՅԳԵՇԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

«17» «դեկտեմբեր» 2024թ. **N 277**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Մեխակյան

Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ ՀՀ Արմավիրի մարզի <<Այգեշատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում առկա է ուսուցչի թափուր տեղ հետևյալ առարկաներից՝

Ինֆորմատիկա -11դասաժամ

Աշխարհագրություն -8 դասաժամ

Կերպարվեստ -5 դասաժամ

Երաժշտություն - 6 դասաժամ

Տեխնոլոգիա – 8 դասաժամ

Ռուսաց լեզու - 25 դասաժամ

Հայ եկեղեցու պատմություն - 2 դասաժամ

Ֆիզիկա - 11 դասաժամ

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ Սուսաննա Խաչատրյան

1116, Խոյ համայնք, Այգեշատ գյուղ, Մայիսյան փողոց, 15 շենք, հեռ.՝ 094200232, էլ. փոստ՝ aygeshatvagarshapat@mail.ru

Scanned with CamScanner

Մրցույթ՝ Արմավիրի մարզի <<Այգեշատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի Ինֆորմատիկա(11 դասաժամ), Աշխարհագրություն (8 դասաժամ), Տեխնոլոգիա (4 դասաժամ), Կերպարվեստ (5 դասաժամ), Երաժշտություն (6 դասաժամ), Ռ. լեզու (25 դասաժամ), Հայ եկեղեցու պատմություն (2 դասաժամ), Ֆիզիկա (11 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերիհամար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են դեկտեմբերի 17-ից մինչև դեկտեմբերի 27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:
Մրցույթները տեղի կունենան **2024 թ. դեկտեմբերի 30-ին՝ ժամը 14:00-ին**, Արմավիրի մարզի Այգեշատի միջնակարգ դպրոցում, հասցե՝ Արմավիրի մարզ,Վաղարշապատի տարածաշրջան, գ. Այգեշատ Մայիսյան փողոց,15 շենք :
Տեղեկությունների համար զանգահարել 094-200-232 հեռախոսահամարով:

Scanned with CamScanner